ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Բիոլոգ. և գյուղատնտ. գիտություններ X, № 11, 1957 Биол. и сельхоз. науки

Ա. Ա. ԼԱԼԱՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԾԱՌԱՅԱԾ ԱՌԱՋԻՆ ՌՈՒՍ ԲԺԻՇԿՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Հայաստանում ծառայած առաջին ռուս բժիշկների գործունեությունը շատ քիչ է ուսումնասիրված և լուսաբանված։ Առանձին հեղինակներ (Լ. Մելիք-Շահնազարյան, Լ. Ս. Հովհաննիսյան) արխիվային փաստաթղթերի հիման վրա միայն մասամբ լուսաբանել են այս հարցի առանձին կողմերը։

Այսանդ մենք նպատակ ենք ունեցել Հայաստանում ծառայած առաջին ռուս բժիշկներից մեկի դրչին պատկանող երկու մոռացված աշխատության նյութերի հիման վրա լուսաբանել նրանց գործունեությունը հատկապես ժանտախտի դեմ մղված պայքարում։

Խոսքը վերաբերում է Հայաստանում ծառայած ռուս առաջին բժիշկներից մեկի՝ ռուս-թուրքական պատերազմի Կովկասյան ճակատում գործող 20-րդ հետևակային դիվիզիայի բժիշկ Շուլլերի 1829 թվականին հրատարակված աշխատություններին, որոնք կրում են «Կարսում և նրա շրջակայքում ժանտախտը դադարեցնելու համար օգտագործված միջոցառումները» և «Ժանտախտի ժամանակ անդիկային քսուկի և փայտի յուղի մասին» վերնագրերը։

Ինչպես թուրքական զորքերի, այնպես էլ Կարսի բնակիչների մեջ այդ ժամանակ խիստ տարածված էր ժանտախտը, որը Կարսում և նրա շրջակայքում, ըստ Շուլլերի տվյալների, 2000 զոհ տարավ։ Կարսում մնացած ռուսական բանակի ջոկատի ավագ բժիշկ Շուլլերը գլխավոր հրամանատարությունից հանձնարարություն է ստանում միջոցառումներ ձեռնարկել Կարսի վիլայեթում ժանտախտը լիկվիդացնելու համար։ Բժիշկ Շուլլերը այդ ուղղությամբ կատարված միջոցառումները նկարագրել է իր «Կարսում և նրա շրջակայքում ժանտախտը դադարեցնելու համար օգտագործված միջոցառումները» վերնագիրը կրող աշխատության մեջ։ Ի՞նչ ենք մենք տեղեկանում այդ աշխատությունից։

Կարսում և նրա շրջակայքում հակաժանտախտային պայքարը կազմակերպելու գործում հիմնական դժվարություններից մեկը գիտական պահանջներին համապատասխանող կարանտիններ կառուցելու անհնարինությունն էր։ Այդ մասին Շուլլերը գրում է. «... Այս ասիական ժողովուրդը ուղղակի հայտարարեց, թե լավ է իրենց բոլորի գլուխը կտրեն, քան իրենք ենթարկվեն կարանտինային օրենքներին, որոնցից նրանք արտակարգ վախենում են և որոնք, նրանց կարծիքով հակասում են նրանց կրոնին»։

Ակնհայտ էր, որ արևելյան բռնապետության լծի տակ դարերով տառապող ժողովրդի մտավոր իրավիճակը նաև առողջապահության հարցերում զգալի չափով պարարտ հող էր համաճարակների տարածման համար և որոշակի արգելք հակահամաճարակային պայքարում։ Պետք էր դեթ մասամբ ցրել այդ իրավիճակը, և ժողովուրդն ինքը կդառնար հակահամաճարակային պայքարի մարտիկ։

Կարսում և նրա շրջակայքում ժանտախտը դադարեցնելու ուղղությամբ բժիշկ Շուլլերի ձեռնարկած միջոցառումները ամենից առաջ նպատակ են ունեցել բնակչությանը հաղորդել տարրական գիտելիքներ ժանտախտի էության, նրա տարածման և նրա դեմ պայքարի միջոցների մասին, այսինքն, այսօրվա տերմինով ասած՝ սանիտարական լայն ագիտացիա տանել։ Այդ միջոցառումը իրագործվել է դանազան ձևերով։ Ինքը՝ բժիշկը բնակչությանը պատմել է, այդ ամենի մասին փողոցներում և շուկաներում։ Բժշկի զրույցները մեծ չափով հետաքրքրել են բնակչությանը։ Այդ հետաքրքրությունը չի կրել զուտ հետաքրքրասիրության բնույթ, այլ հետապնդել է գործնական նպատակներ. դրա ապացույցն այն է, որ ամենուրեք բնակիչները աշխատել են գտնել գրագետ մարդիկ և գրի առնել բժշկի ասածները։ Չի նշված ոչ մի դեպք, երբ բնակիչները ծաղրի, արհամարհանքի կամ հալածանքի ենթարկած լինեն բժշկին։

Բժիշկ Շուլլերի տված հիմնական խրատները եղել են հետևյալները. «1) Լվացվել աղի ջրով, 2) ոչ ոքի իր մոտ հյուր չընդունել և իր իրերի վրա ոչ ոքի թույլ չտալ նստել, 3) հյուր չգնալ և չնստել ուրիշների վարակ ընդունող իրեղենների վրա. չգնալ իր խանութը և փողոցում չքսվել այլ մարդկանց, 4) իր ապրանքներից և իրեղեններից ոչ ոքի ոչինչ չվաճառել, չտալ և առանց իմանալու չառնել ոչինչ, որ կարող է իր մեջ վարակ պարունակել, բացի ուտելիքներից, 5) կասկածելի զգեստը լվանալ աղաջրում և քամուն տալ, 6) վարակված կամ վարակված լինելու մեջ կասկածվող մարդկանց հավաստել, 7) հիվանդություն հայտնվելու դեպքում դիմել բժշկական օգնության»։

Ամիսի ուշ, օդոստոսի կեսերին, բժիշկ Շուլլերը դրում է նոր խրատ, որի բովանդակությունը թեպետ չի բերված, բայց դրա մասին հեղինակը ասում է, թե նպատակ է դրել, ժանտախտից սարսափած բնակչությանը «... հասկացողություն տալ վարակվող և չվարակվող իրերի մասին, այլև այն մասին, թե ինչպես պետք է վարակված իրերը մաքրել ժանտախտի թույնից»։

Այս խրատները թարգմանվել են հայերեն ու թուրքերեն և ամեն օր ընթերցվել բազարի շուկաներում, ժանտախտով վարակված տներում, ինչպես նաև եկեղեցիներում ու մզկիթներում։

Դժվար չէ նկատել, որ վերը բերված խրատի բովանդակությունը իր ժամանակի համար շատ խելացի է, առաջավոր և նպատակասլաց։ Հեղինակը չի շափազանցնում, երբ գտնում է, որ այդ խրատի կիրառումը մեծ չափով նպաստեց ժանտախտի վերացման գործին։

Հայաստանում ծառայած առաջին ռուս բժիշկները ճիշտ էին վարվում, երբ իրենց գործունեության հիմնական նպատակներից մեկը տեսնում էին բնակչության լայն խավերում բժշկա-սանիտարական գիտելիքների տարածման մեջ։

Բացի զրույցներից և խրատներից, բժիշկ Շուլլերը հաջողությամբ կիրառել է ժանտախտով վարակվելու առանձին դեպքերի մասին բնակչությանը հայտարարությունների ձևով տեղյակ պահելու եղանակը։ Ձեռնարկված միջոցառումներն ընդգրկել են ոչ միայն Կարս քաղաքը, այլև Կարսի շրջանի գյուղերը և վիլայեթը։ Խրատն արտագրվել է այնքան օրինակ, որքան ժանտախտով վարակված գյուղեր կային վիլայեթում և արդեն օդոստոսին աստիճանավորների միջոցով ուղարկվել այդ բոլոր գյուղերը։ Հեղինակը նշում է, որ Կարսի շրջանի գյուղերում այդ խրատում տրված առաջադրանքները բնակիչները օգտագործել են կամավոր կերպով և բարեխղճությամբ, որով և նա բացատրում է ժանտախ-

ափ գաղթավայր Կարսի շրջանի գյուղերում։ Հեղինակը մատնանշում է, որ Կարսի ամբողջ վիլայեթում, ինչպես քաղաքի, այնպես էլ գյուղի բնակչությունը կամավոր կերպով կատարում էին բժշկի տված խորհուրդները, որը և հանդիսացավ այդտեղ ժանտախտի դադարեցման հիմնական նախադրյալներից մեկը։

Ինչպիսի՞ միջոցառումներ են ձեռնարկվել ժանտախտով վարակվածների նկատմամբ։ Հակաժանտախտային պայքարը տարել են բժշկական աստիճանավորները՝ բժիշկները (медики) և կարանտինային քույրերը (карантинные бабки)։

Բժշկական անձնակազմը զննել է բնակիչներին, հիվանդներին գեղորայք է բաժանել։ Սակայն բժշկական անձնակազմի գործունեությունը հակաժանտախտային պայքարում որոշ չափով սահմանափակված է եղել նաև այն առումով, որ հիվանդների և հիվանդությամբ վարակված լինելու մեջ կասկածվող անձանց մարմնի զննումը պարտադիր բնույթ չի կրել։ Բժշկական անձնակազմն իրավունք չի ունեցել զննելու այդպիսի անձանց, եթե դրանք դեմ են եղել իրենց զննմանը։

Ժանտախտով վարակված բնակիչներ ունեցող տների առջև հատուկ նշան է դրվել, որպեսզի բժշկական աստիճանավորները կարողանան գտնել այդ տները և վարակազերծեն իրերը։

Հակաժանտախտային պայքարում ինչպիսի դեր էին գրավել ռազմական իշխանությունները և հոգևորականությունը։

Վերոհիշյալ միջոցառումների իրագործելու ասպարեզում որոշակի դեր է խաղացել ռազմական իշխանությունը։ Ամենից առաջ, ինչպես վերևում արդեն ասվեց, բժիշկ Շուլլերը գլխավոր հրամանատարության կողմից առաջադրանք է ունեցել ժանտախտի դեմ պայքար կազմակերպել Կարսում և նրա շրջակայքում։ Գեներալ-մայոր, իշխան Բեկովիչ-Չերկասկին հավաքել է, քաղաքի հոգևորականությանն ու թուրքական վարչությանը և առաջարկել կիրառել բժշկի խորհուրդներում առաջադրված միջոցառումները։

Թուրքական ղեկավարները և որոշ հոգևորականներ շարունակել են տարածել այն միտքը, որ ժանտախտը աստծո պատիժն է մարդկանց մեղքերի համար, հետևապես մարդիկ նրա դեմ անզոր են։ Սակայն բնակիչները իրենց փորձով համոզվել են, որ ժանտախտը տարածվում է վարակի ձևով և հիվանդությունից կարելի է խուսափել նախազգուշական միջոցառումների շնորհիվ։ Այդպիսի համոզմունքը, որ ձեռք է բերվել սեփական փորձով, չէր կարող չխարխլել ժանտախտը աստծո պատժի վերագրելու վերսիան, հետևապես չհարվածել սնոտիապաշտությանը։ Հոգևորականությունը հակաժանտախտային պայքարում բացասական դեր է խաղացել նաև այն իմաստով, որ, իր շահագիտական նպատակներից ելնելով, օբյեկտիվորեն նպաստել է ժանտախտի տարածմանը։ Ըստ տրադիցիայի, մահացածների զգեստները նվիրվել են քահանաներին, որոնք այն վաճառել են իրենց կրպակներում։

Քանի որ այդ շրջանում ժանտախտից հսկայական մահացություն է եղել, ուստի մեռածների զգեստները հոգևորականներն վաճառելով, վարակի աղբյուրն տարածել են առողջների մեջ և դրանով փաստորեն օժանդակել ժանտախտի տարածմանը։ Կարսի բնակիչները բժշկական խորհուրդների բարերար ազդեցության շնորհիվ դադարել են կրոնավորների կրպակներից զգեստներ գնել։ Քահանաները, սակայն, չցանկանալով զրկվել իրենց շահի աղբյուրից,

այդ զգեստները սկսել են վաճառել Կարսի շրջակա գյուղերում և դրանով իսկ նպաստել այնտեղ ժանտախտի տարածմանը։ Բայց շուտով այդ նրանց արգելվել է։

Հեղինակը նշում է նաև Կարսի հայ քահանաների մի այլ վատ արարքի մասին, որ զգալի չափով նպաստել է ժանտախտի տարածմանը։ Մարզային վարչության կողմից կարգադրություն է եղել հայ ու մահմեդական հոգևորականությանը՝ ամեն օր տեղեկություն տալ ոստիկանությանը և բժիշկ Շուլլերին ժանտախտով հիվանդների և դրանից մեռածների վերաբերյալ։ Հայ քահանաները, ինչպես վերը ասվեց, ձրիաբար ստացել և վաճառել են մեռածների զգեստները։ Որպեսզի կարողանան շարունակել իրենց այդ շահավետ առևտուրը, նրանք թաքցրել են իրական փաստերը և տեղեկություն են տվել, թե իբրև հայկական արվարձաններում ժանտախտ չկա։ Այնտեղ ժանտախտը գնալով տարածվել է, նրանք սկսել են մեռածներին թաղել գաղտնի կերպով, գիշերը, և մեկ ամսվա ընթացքում երկու մահալներում մեռել են 300 մարդ, որոնց մասին հայ քահանաները ոչ մի տեղեկություն չեն տվել, այլ շարունակել են պնդել, թե այնտեղ ժանտախտ հիվանդություն, կամ դրանից մահացություն ոչ մի դեպք չկա։ Քահանաների այդ արարքը հայտնի դառնալուց հետո միայն հնարավոր է եղել վերացնել ժանտախտը նաև այդ մահալներում։

Շուլլերի մյուս աշխատությունը կրում է «Ժանտախտի ժամանակ սնդիկային քսուքի և փայտի յուղի օգտի մասին» վերնագիրը։ Այդ, այսօրվա տերմինով ասած, «դիտողություն է պրակտիկայից» կատարված այն շրջանում և պայմաններում, որոնց մասին վերևում արդեն ասվեց։

Բժիշկ Շուլլերի կողմից կիրառված ժանտախտի բուժումը իր ժամանակին հակաժանտախտային բավականաչափ սահմանափակ ու սուղ միջոցառումների արտահայտությունն է, որ պայմանավորված է պատմական պատճառներով, ամենից առաջ՝ միկրոբիոլոգիայի զարգացման ցածր աստիճանով։

Բայց այստեղ հետաքրքրական է մի այլ հանգամանք։ Բժիշկ Շուլլերը, չնայած վերը նկարագրված ծանր պայմաններին, չի դադարում գիտական բնույթի դիտողություններ և ընդհանրացումներ կատարել։ Նա իր պարտքն է համարում նաև դրանց արդյունքը հրապարակել։

Վերևում ասվածի հիման վրա հանգում ենք հետևյալ եզրակացություններին.

1. Հայաստանում ծառայած առաջին ռուս բժիշկների կողմից գրված և մեզ հասած առայժմ հայտնի միակ աշխատությունները 1828—1829 թթ. ռուս-թուրքական պատերազմի Կովկասյան ճակատում գործող 20-րդ հետևակային դիվիզիայի բժիշկ Շուլլերի երկու աշխատություններն են։

2. Վերոհիշյալ աշխատությունները յուրահատուկ հետաքրքրություն են ներկայացնում բժշկության պատմության, մասնավորապես Հայաստանում ծառայած առաջին ռուս բժիշկների գործունեության լուսաբանման համար։

3. Այդ բժիշկների գործունեությունը մի հերոսական էջ է ռուս բժիշկների գործունեության պատմության մեջ։ Նրանք հաղթահարել են բազմաթիվ և բազմազան դժվարություններ։ Հայաստանում առաջին ռուս բժիշկները հակաժանտախտային պայքարում զգալի արգելքների են հանդիպել նաև թուրքական ղեկավարության մնացորդների և հոգևորականների կողմից։

4. Ինչպես նախորդ հետազոտողների, այնպես էլ մեր տվյալներից ելնելով կարելի է ասել, որ Հայաստանում առաջին ռուս բժիշկները իրենց գործու-

նեության հիմնական ոլորտներից մեկը համարել են բժշկական դիտելիքների տարածումը բնակչության լայն խավերի մեջ։ Նրանց կենդանի ղրույցները, գրած խրատները գիտական բժշկականության և հիգիենայի տարրերի պոպուլյարիզացիայի առաջին փորձն էր դարեր շարունակ արևելյան բռնապետության խավերի ճիրաններում տառապող հայ բնակչության մեջ։ Այդ փորձը գրական արդյունք տվեց ինչպես համաճարակների դեմ մղված պայքարում, այնպես էլ բնակչության հիգիենիկ կուլտուրայի բարձրացման գործում։

5. Հայաստանում ծառայած առաջին ռուս բժիշկները բուժական և պրոֆիլակտիկ բնագավառ գործունեության հետ մեկտեղ կատարել են նաև գիտական դիտողություններ ու ընդհանրացումներ, այլ կերպ ասած, բուժական և պրոֆիլակտիկ աշխատանքը զուգակցել են գիտական աշխատանքի հետ։

А. А. ЛАЛАЯН

К ВОПРОСУ О ДЕЯТЕЛЬНОСТИ ПЕРВЫХ РУССКИХ ВРАЧЕЙ, РАБОТАВШИХ В АРМЕНИИ

Резюме

На основании работ дивизионного доктора 20-й пехотной дивизии Шуллера, который в русско-турецкой войне 1828—1829 гг. служил на Кавказском фронте, мы задались целью осветить некоторые стороны деятельности первых русских врачей в Армении.

Работы Шуллера, под заглавием «Меры, употребленные для прекращения чумы в Карсе и его окрестностях» и «О пользе ртутной мази и деревянного масла в чуме», являются единственными нам известными работами, которые написаны первыми русскими врачами, работавшими в Армении.

Вышеупомянутые работы представляют особый интерес для истории медицины в Армении в связи с освещением деятельности первых русских врачей в Армении, труд которых—одна из героических страниц в истории деятельности русских врачей. Преодолевая невероятные и многочисленные трудности в борьбе против чумы, они встречались с бесчисленными препятствиями, чинимыми оставшимися представителями турецкой администрации и духовенства.

Исходя из данных прежних исследователей, а также из наших данных, можно сказать, что русские врачи в своей деятельности одну из важных задач видели в распространении элементов медицинских знаний среди широких слоев населения. Эта работа принесла значительную пользу как в борьбе против эпидемии, так и в деле поднятия гигиенической культуры населения.

Первые русские врачи, служащие в Армении, вместе с плодотворной лечебной и профилактической работой вели также наблюдения и обобщения научного характера.